Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով իրականացնել լիցենզավորված անձանց կողմից 2021 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում:
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2021 և 2022 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիտորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման, գնման գործընթացի կազմակերպման, պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի մոնիտորինգ:

- «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին միացման գործընթացի մոնիտորինգ:
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել բաժանորդներին վճարված տուժանքների մոնիտորինգ:
- Լրամշակել հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների, գնումների մասին հաշվետվության ներկայացման և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիտորինգի կարգերը:
- Լրամշակել գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկան:
- Իրականացնել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարների վերանայման նպատակահարամարության վերլուծություն:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը մշակել և Ազգային ժողով ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի գործունեության ծրագիրը:
- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
  - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամյակային ցուցանիշները,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության, ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: